ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1960 Общественные науки

Ն. Ա. Պառնասյան

ՊԱՅՄԱՆԻ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բարդ նախադասությունների համակարգում հատուկ տեղ են գրավում սրանք, որոնց բաղկացուցիչ մասերը չեն կապակցվում շաղկապների կամ հարաբերական բառերի օգնությամբ։

Որպեսզի երկու պարզ նախադասություններ ստեղծեն մեկ բարդ նախադասություն, նրանք պետք է սերտորեն միացած լինեն թե՛ իրենց ձևով, թե՛ բովանդակությամբ։ Եթե շաղկապավոր բարդ նախադասությունը իր ձևական միասնությունն ու ամբողջականությունը ստեղծում է հատուկ օժանդակ բառերի միջոցով՝ շաղկապներով ու հարաբերական դերանուններով, ապա անշաղկապ բարդ նախադասությունը զրկված լինելով կապի այս ձևական ցուցանիշներից՝ իր ներքին միասնությունը ստեղծում է կառուցվածքային ուրիշ միջոցների օգնությամբ։

Բանավոր խոսքում միասնական ամբողջություն ստեղծելուն շատ է օժանդակում ինտոնացիան, որը նախադասությանը տալիս է ոչ միայն տարբեր նշանակություններ ու երանգներ, այլ նաև օգնում է բարդ նախադասության ձևի ստեղծմանը։ Սակայն, անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչ մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերությունների բնույթը որոշելիս չպետք է ելնել միայն ինտոնացիայից, որովհետև այն հատուկ է միայն բանավոր խոսքին։ Պետք է հիմնական ուշադրությունը դարձնել բարդ նախադասությունների ներքին կառուցվածքային կախվածության վրա, որն էլ պետք է դիտել որպես անշաղկապ բարդ նախադասությունների բաղկացուցիչ մասերի իմաստային փոխհարաբերությունների արտահայտություն։

Ռուս քերականագիտության մեջ տարածված է այն կարծիքը, որ անշաղկապ բարդ նախադասությունները չի կարելի բաժանել համադասականի և ստորադասականի, որովհետև նրանք չեն միանում համադասական կամ ստորադասական շաղկապներով ու հարաբերական բառերով[1]։ Այս տեսակետին պետք է մոտենալ վերապահորեն, որովհետև բարդ նախադասության մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերությունները արտահայտվում են ոչ միայն շաղկապների և հարաբերական բառերի օգնությամբ, այլ նաև քերականական այլ միջոցներով՝ շարադասությամբ, բայերի ժամանակների հաջորդականությամբ, եղանակավորող բառերի օգնությամբ և այլն, որոնց դերը բարդ նախադասությունների մասերի կապակցության և նրանց միջև եղած իմաստային փոխհարաբերություններն արտահայտելում հատկապես ակնառու է անշաղկապ բարդ նախադասություններում։

---

[1] *Տե՛ս* Грамматика русского языка, II т., Москва, 1954, *էջ 382։*

Մեր նպատակն է այստեղ, հոդվածի ընձեռած հնարավորությունների սահմաններում, բացահայտել պայմանի անշաղկապ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկությունները։

Ժամանակակից հայերենում շատ տարածված են պայմանի անշաղկապ նախադասությունները։ Նրանք շատ են հանդիպում գեղարվեստական գրականության մեջ և հատկապես բանավոր խոսքում (գիտական գրականության մեջ անշաղկապ բարդ ստորադասական նախադասություններ սովորաբար չեն օգտագործվում)։ Սրանք այն բարդ նախադասություններն են, որոնց բաղադրիչ մասերի՝ պարզ նախադասությունների միջև եղած պայմանի իմաստային հարաբերության արտահայտման համար չեն օգտագործվում կապակցության հատուկ միջոցներ՝ շաղկապներ։ Ստորադասական հարաբերությունը այս նախադասություններում արտահայտվում է նրանով, որ որևէ գործողություն իրականացնելու հնարավորությունը կախման մեջ է դրվում ուրիշ գործողությունից։

Պայմանի իմաստային հարաբերություն ունեցող անշաղկապ բարդ ստորադասական նախադասություններն ունեն հետևյալ կառուցվածքային առանձնահատկությունները.

1. Գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասությունը այս նախադասություններում ազատ չէ։ Որպես կանոն, պայմանի երկրորդական նախադասությունները անշաղկապ կապակցության ժամանակ լինում են առաջադաս։ Օրինակներ.

«Երեմ մաներ ունենամ՝ կտանեմ հացի կտամ, կբերեմ կուտեք» (Ռումանյան)։

«Զլիներ այդ ձյունակույտը, երկուսն էլ կջախջախվեին» (Խանզադյան)։

Բերված օրինակներում առկա է պայմանի ստորադասական հարաբերությունը։ Երկրորդական նախադասությունները դրված են առաջադաս և ցույց են տալիս այն պայմանը, որի առկայության դեպքում միայն կարող է կատարվել (կամ կատարվում է) գլխավոր նախադասությամբ տրված գործողությունը։

2. Պայմանի երկրորդական նախադասության և գլխավորի անշաղկապ կապակցության մեջ նշանակություն ունի նաև ինտոնացիան, որի դերը մեծ է հատկապես բանավոր խոսքում։ Երկրորդական նախադասությունը, որը, ինչպես ասվեց, լինում է առաջադաս, ունի նախադասության վերջում բարձրացող ինտոնացիա, ըստ որում առանձնապես շեշտվում է նախադասության ստորոգյալը։ Դրան հաջորդում է մի փոքր դադար, ապա արտաբերվում է գլխավոր նախադասությունը։ Երկրորդական նախադասության բարձրացող ինտոնացիան ցույց է տալիս, որ նախադասությունը դեռ չի ավարտվել և դրանով էլ հանդիսանում է բարդ նախադասություն կազմելու օժանդակ միջոց։ Հաճախ պայմանի երկրորդական նախադասությունը ունենում է հարցական ինտոնացիա, իսկ գլխավոր նախադասությունը՝ պատասխանի։ Գրավոր խոսքում ինտոնացիան արտահայտվում է կետադրության միջոցով։ Պայմանի երկրորդական նախադասությունը բաժանվում է գլխավորից ստորակետով, բութով, երբեմն նաև միջակետով. իսկ երբ երկրորդական նախադասությունը ունենում է հարցական ինտոնացիա, նրա ստորոգյալի վրա դրվում է հարցական նշան (տես՝ նախորդ, ինչպես նաև հաջորդ օրինակները)։

3. Պայմանի երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկություններից ամենակարևորը բայի եղանակների ու ժամանակների հաջորդականությունն է, որի միջոցով ոչ միայն իրացվում է կապը գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև, այլև նրանց միջև եղած պայմանի հարաբերությունը տրվում է տարբեր իմաստային երանգներ։ Գլխավոր նախադասության մեջ բայի ժամանակների օգտագործումը ազատ չէ և կախված է այն բանից, թե ինչ եղանակ և ժամանակ է օգտագործված պայմանի երկրորդական նախադասության մեջ։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև կարող է առկա լինել բայի եղանակների հետևյալ հաջորդականությունը.

ա) Երկրորդական նախադասության ստորոգյալը, որով նկարագրվում է գլխավորի գործողության կատարման համար անհրաժեշտ պայմանը, դրվում է ըղձական եղանակով, իսկ գլխավոր նախադասության մեջ նրան համապատասխանում է պայմանական եղանակ։ Վերջինս ցույց է տալիս, որ գլխավոր նախադասության մեջ նկարագրված գործողությունը կատարելու համար անհրաժեշտ է որոշ պայման։ Այս դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները ժամանակով համաձայնվում են (երկուսն էլ դրվում է կամ ապառնի, կամ անցյալի ապառնի ժամանակներով. օրինակ՝ «Զյունը մի քանի րոպե էլ էս թափով գա, մի մետր կնստի» (Ն. Զարյան)։ «Սովորական եղանակ լիներ, մենք դժվարություն չէինք զգա» (Լեո)։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների մեջ օգտագործվում են ըղձական և պայմանական եղանակների ապառնի ժամանակներն այն դեպքերում, երբ նկարագրվում է որոշ պայմանի առկայության դեպքում ապագայում կատարվելիք հնարավոր գործողություն։ Օրինակներ.

«Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի, բ՚ենս՝ մի ծերից մյուս ծերը կընկնի» (Թումանյան)։

«Մի անգամ էլ ասեմ, կպարեմ» (Մահարի)։ «Է, ասեմ՝ բոց կբլնի, չասեմ՝ խոց կլինի» (Սեկոյան)։

Այս կառուցվածքի նախադասությունները շատ են տարածված հատկապես ժողովրդական առածների մեջ։ Օրինակներ՝

«Գեղ կանգնի, գերան կկոտրի»։ «Տուն փոխես՝ տնով մեկ կմանդվես. գեղ փոխես՝ գեղով մեկ»։ «Լեզուն չբլնի, ագռավները աչքերը կհանեն» և այլն («Հայկական առածանի»)։

Այս նախադասությունների միջև եղած իմաստային փոխհարաբերությունները կարելի է անվանել պայման—հետևանքային, որովհետև գլխավոր նախադասությամբ նկարագրված գործողությունը դիտվում է որպես երկրորդական նախադասության գործողությունից բխող հնարավոր հետևանք (տես վերևի օրինակները)։

Ըղձական և պայմանական եղանակների անցյալի ապառնի ժամանակները օգտագործվում են այն ժամանակ, երբ պատմվում է անցյալում՝ որոշակի պայմանի առկայությամբ հնարավոր, բայց չիրագործված, տեղի չունեցած գործողության մասին, կամ այնպիսի գործողության կամ եղելության մասին, որի իրագործումը համարվում է անհնար՝ դրա համար անհրաժեշտ պայմանի բացակայության պատճառով։ Օրինակներ՝ «Սրտներս սևացել էր.

դանակ տայիր՝ արյուն չէր կարիլ» (Թումանյան)։ «Աշխարհքը իրան տայիր՝ աչքը էլի մրջյունի տարած մեծ գարի հատիկի վրա կըլներ» (Իսահակյան)։ «Առաջվա առողջություն ունենայի, օրական բսան անգամ կլվանայի» (Թաֆալյան)։

Նույն իմաստն արտահայտելու համար գլխավոր նախադասության մեջ կարող է օգտագործվել նաև սահմանական եղանակի անցյալի վաղակատար ժամանակը (այն համապատասխանում է երկրորդական նախադասության ըղձական եղանակի անցյալի ապառնուն)։ Այս դեպքում ավելի է ընդգծվում գործողության կատարման հնարավոր եղած լինելը. օրինակ՝ «Քո խաղողն ինձ տված լինեին, հիմի մի կով էլ առել» (Սեկոյան)։ Գլխավոր նախադասության մեջ կարող է հանդես գալ այն ժամանակ հարաբերյալը, որով ավելի սերտ է դառնում գլխավոր ու երկրորդական նախադասությունների կապը, ինչպես նաև ընդգծվում է նրանց՝ պայմանի իմաստային փոխհարաբերության մեջ եղած ժամանակի իմաստային երանգը (ընդհանրապես բոլոր պայմանի երկրորդական նախադասություններն էլ ունեն ժամանակային հաջորդականության իմաստային երանգ, որովհետև ենթադրվում է, որ գլխավոր նախադասության գործողությունը միշտ հաջորդելու է երկրորդական նախադասության գործողությանը)։ Օրինակ՝ «Հանդիստ լիներ իմիդմա, արդար լիներին իմ գործերը, այն ժամանակ թեկուզ բոլոր աշխարհը կանգներ իմ դեմ, ես չէի ընկնվի» (Մուրացան)։

Այս դեպքում, երբ գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները դրվում են ժխտական ձևով, ցույց են տալիս իրականության մեջ արդեն տեղի ունեցած գործողություն և հավասարարժեք են հիմունքի նախադասություններին. օրինակ՝ «Չլիներ Ցլիկ Ամրամը, Գուդարքն ու Տայքը չէին բաժանվի հայոց թագավորից» (Մուրացան)։ Այս նախադասությունն իր արտահայտած իմաստային փոխհարաբերությամբ հավասարարժեք է «Գուդարքն ու Տայքը բաժանվեցին հայոց թագավորից, քանի որ կար Ցլիկ Ամրամը» նախադասությանը։

Այստեղ գլխավոր նախադասությունը ցույց է տալիս արդեն կատարված գործողություն, որի կատարումը սակայն անհնար կլիներ, եթե տեղի չունենար կամ առկա չլիներ երկրորդական նախադասությամբ տրված գործողությունը կամ երևույթը։ Վերջինս պայման է հանդիսացել գլխավոր նախադասության գործողության կատարման համար։

Երկրորդական նախադասության մեջ ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակի օգտագործման դեպքում գլխավոր նախադասությունը կարող է դրվել հարցական ձևով։ Դա ցույց է տալիս, որ նրանում նկարագրված գործողությունը կատարվել է, տեղի է ունեցել, բայց չէր կատարվի, եթե իրագործվեր երկրորդական նախադասությամբ տրված պայմանը. օրինակ՝ «Գլուխը քարը, գոնե փող լիներ, էլ ինչո՞ւ էսքան մարդ գանգատ կաներ» (Թումանյան)։

Ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակի ժխտական ձևին գլխավորի մեջ կարող է համապատասխանել սահմանական եղանակի անցյալ հարակատար ժամանակը, որն այստեղ օգտագործվում է ոչ թե իր բուն նշանակությամբ, այլ պայմանական եղանակի անցյալի ապառնու։ Այստեղ ընդգծվում է, որ գլխավոր նախադասությունում տրված գործողությունը չի կատարվել կամ չի կատարվում միայն երկրորդական նախադասությամբ

տրված պայմանի առկայության հետևանքով. օրինակ՝ «Զլինեին իմ ընկերները թեկուզ մի օր, նա կորած էր անդառնալիորեն» (Վ. Անասյան)։

Այս նույն իմաստն արտահայտելու համար գլխավոր նախադասության մեջ օգտագործվում է նաև պայմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակը, օրինակներ. «Զլիներ նրա սառնասրտությունը, աեղից կբարձրանար, դուրս կտաներ որդուն» (Սևունց)։ «Պատերազմ չլիներ, ուրիշ բան, կշարունակեիր կրթությունդ» (Խեչումյան)։ Միայն առաջին դեպքում (անցյալի հարակատար օգտագործելիս) ընդգծվում, շեշտվում է գլխավոր նախադասության գործողության հավանական, բայց կատարված չլինելը։

Երբ ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակին համապատասխանում է պայմանականի անցյալի ապառնու ժխտական ձևը, բարդ նախադասությունը արտահայտում է հետևյալ իմաստային փոխհարաբերությունը— գլխավոր նախադասությամբ նկարագրվում է անցյալում կատարված, տեղի ունեցած գործողություն, որը չէր կատարվի, եթե առկա չլիներ երկրորդական նախադասությամբ տրված պայմանը. օրինակ՝ «Գուցե դու մոտս լինեիր, ես այնպես մենակ, դժբախտ չլինեի» (Մ. Մանվելյան)։

Երբ գլխավոր նախադասությամբ նկարագրվում է մի գործողություն, որի կատարման հնարավորությունը ենթադրվում է որոշակի պայմանի առկայության դեպքում, նրանում որպես ստորոգյալ հանդես է գալիս «կարող է» միադիմի բայը՝ գործողություն ցույց տվող բայի անորոշ դերբայի հետ. երկրորդական նախադասության ստորոգյալը դարձյալ դրվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակով։ Օրինակ՝ «Քար վերցնեն խփեն, տիկին Բերսարեն կարող է վիրավորվել, շների վրա ուշադրություն չդարձնեն, կարող է պատռել մեկն ու մեկի շալվարը» (Ն. Զարյան)։

բ) Երբ գլխավոր նախադասությամբ տրվում է եզրակացություն՝ որոշակի պայմանում կատարվելիք գործողության մասին կամ հորդոր՝ անհրաժեշտ պայմանի առկայությամբ կատարվելիք գործողության մասին, պայմանի երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է պայմանական եղանակի ապառնի ժամանակով, որին գլխավոր նախադասության մեջ համապատասխանում է նույնպես պայմանական եղանակի ապառնի ժամանակով դրված ստորոգյալ (առաջին դեպքի համար) կամ հրամայական եղանակ (երկրորդ դեպքի համար)։ Երկրորդական նախադասությունը հաճախ ունենում է հարցական ինտոնացիա։ Օրինակներ.

«Կկատարվի՞ խնդիրս—լավ, չի՞ կատարվի—խոմ ինձանից մի բան չի պակսիլ» (Շիրվանզադե)։

«Կլինի՞ կտան, չի՞ լինի, իրենց փոխարեն կտան հարուստ կոլտնտեսությունները» (Սեկոյան)։

«Կհարցնեն՝ ասացեք, որ հին ենթակայանի վրա եք աշխատում» (Վերդյան)։

գ) Սահմանական եղանակի ձևերը պայմանի անշաղկապ նախադասություններում օգտագործվում են այն դեպքում, երբ նրանում տրված պայմանը, ենթադրությունը վերաբերում է ներկային կամ անցյալին։

Եթե խոսելու պահին ենթադրվող պայմանի առկայության դեպքում ցանկալի՝ կամ անհրաժեշտ է համարվում գլխավոր նախադասությամբ տրված գործողության կատարումը, երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է սահմանական եղանակի ներկա ժամանակով, որին գլխա-

վոր նախադասության մեջ համապատասխանում են ըղձական, պայմանական կամ հարկադրական եղանակների ապառնի ժամանակները. օրինակներ.

«Ով գալիս ա՝ բարով հազար բարի, բա՞ն ա ուզում՝ փող բերի, տանի» (Թումանյան)։ «Գո՞մ ես կառուցում, ուզում ես մարագ, էգուց կկանչես կոլխոզի ժողով, հարցը կքննես ժողովի առաջ» (Ն. Զարյան)։

«Ձե՞ֆ ուզում, չենք աշխատի» (Ն. Զարյան)։

Երբեմն գլխավոր նախադասությամբ հորդորվում է կատարել մի գործողություն՝ երկրորդական նախադասության մեջ նկարագրված արդեն առկա պայմանի պատճառով։ Այս ժամանակ երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է ներկա ժամանակով, իսկ գլխավոր նախադասության ստորոգյալը՝ հրամայական եղանակով։ Պայմանի նախադասությունը այս դեպքում հաճախ ունենում է հարցական ինտոնացիա։ Բերենք մի երկու օրինակ.

«Թագավորն է քո թշնամին, կոի՞վ ունես, իր հետ արա» (Թումանյան)։

«Առաջա՞րկ ես անում, ապացուցիր» (Խեչումյան)։

«Մի կտորը չի՞ հաջողվում, փորձիր մի այլ կերպ» (Մ. Մանվելյան)։

Երկրորդական նախադասության ստորոգյալը այս դեպքում կարող է դրվել նաև հարակատար ժամանակով. օրինակ՝ «Մոլորված ես, տանդ ճամփան զտիր... ի՞նչ ես ուրիշների դռները ծեծում» (Սևունց)։

Անշաղկապ պայմանի նախադասությունների այս տարատեսակը ևս շատ է տարածված ժողովրդական առածների, ասացվածքների մեջ (օրինակ՝ «Ցորեն հաց չունե՞ս, ցորեն լեզու ունեցիր»)։

Երբ բարդ նախադասությամբ պատմվում է մի այնպիսի երևույթի մասին, որը սովորաբար երևան է գալիս երկրորդական նախադասությամբ տրված պայմանի առկայության դեպքում, վերջինիս ստորոգյալը դրվում է սահմանական եղանակի ներկա ժամանակով, իսկ գլխավոր նախադասության ստորոգյալը՝ պայմանական եղանակի ապառնի ժամանակով, օրինակ՝ «Կովդ առատ կար է տալիս, աչքով կտան, կցամաֆի» (Աղավնի)։

Անշաղկապ պայմանի նախադասություններում շատ է տարածված սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը, որին գլխավոր նախադասության մեջ համապատասխանում է պայմանական եղանակը։ Այստեղ անցյալ կատարյալ ժամանակը օգտագործվում է ըղձականի իմաստով և տալիս է պայման հանդիսացող այն երևույթը կամ գործողությունը, որի առկայությամբ ենթադրվում է գլխավոր նախադասության գործողության իրականացումը։ Օրինակներ.

«Մի լավ բան թնկավ ձեռքը, ծոցում կրամցնի» (Ն. Զարյան)։

«Նա չեղավ՝ ուրիշ կառավարիչ կուղարկեն, բաժիններս կավելացնի» (Ն. Զարյան)։

«Նա ուզեց՝ կլինի, չուզեց՝ չէ» (Ռշտունի)։

Հաճախ երկրորդական նախադասության՝ անցյալ կատարյալով արտահայտված ստորոգյալը դրվում է երկրորդ դեմքով, որը բարդ նախադասությանը տալիս է հետևյալ իմաստային երանգը—ցույց է տալիս ընդհանրապես որևէ ենթադրվող պայմանի դեպքում տեղի ունեցող գործողություն (որպես նրա հետևանք)։ Գլխավոր նախադասության մեջ օգտագործվում է կամ պայմանական եղանակի ապառնի ժամանակը, կամ էլ ստորոգյալը լինում է բաղադրյալ։ Վերջինի միջոցով նկարագրվում է այն հետևանքը, որը կարող է

առաջանալ երկրորդական նախադասությամբ տրված գործողության կատարումից։ Բերենք մի քանի օրինակ.

«Աչքդ բեմեցիր, բանիդ տերը չես» (Թումանյան)։

«Մեկ համրանք ուշացար՝ էլ չկա համր» (Դեմիրճյան)։

«Զկարողացար՝ կխայտառակի բոլորի ներկայությամբ» (Վերդյան)։

«Բախտ չունեցար, կտանջվես ինձ պես» (Վերդյան)։

Այն նույն իմաստային փոխհարաբերությունն է արտահայտվում նաև այն բարդ նախադասություններում, որտեղ երկրորդական նախադասության ստորոգյալը դրված է լինում հրամայական եղանակով։ Վերջինս նույնպես գլխավոր նախադասության մեջ համապատասխանում է կամ հրամայական եղանակ, կամ բաղադրյալ ստորոգյալ։

Օրինակներ. «Մտի՛ր ակումբը հիմա, մտի՛ր թատրոնն ու կաֆեն՝ Հաղա՛ր արքա ու Արա կհանդիպես ժպտադեմ» (Չարենց)։

«Շրջի՛ր բոլոր ընտրական տեղամասերը, խոսի՛ր բոլոր ընտրողների հետ, ամենուր նույն խանդավառությունն է» («Երևան»)։

«Ամառն ինչքան կարաս կա Այգեձորում... Իսկ հիմա՝ նոյեմբերին շրջի՛ր գյուղը՝ ոչ մի կարասի չես հանդիպի» (Անանյան)։

«Աշխարհում էս հողի պես հող չկա, մենակ թե դու ջուր տուր նրան, դիմացը բուռեբուռ ոսկի կստանաս» (Սահինյան)։

Պայմանի երկրորդական նախադասությունում օգտագործվում է սահմանական եղանակի վաղակատար ժամանակը, երբ գլխավոր նախադասությամբ հորդորվում է կատարել մի գործողություն, որի իրագործման համար անհրաժեշտ պայմանը փրկանության մեջ արդեն գոյություն ունի։ Գլխավոր նախադասության ստորոգյալը այս դեպքում դրվում է հրամայական եղանակով. օրինակներ՝ «Զորս ընկերներ որոշել ենք պաշտպանել հայրենիքը, դուք էլ մեզ հրացան տվեք» (Ն. Զարյան)։ «Հիվանդանոցի՞ց ես դուրս գրվել՝ ուրեմն ստացիր քո փայը՝ հանգստացիր մի քիչ» (Արմեն)։ «Զեռքդ խաղող է ընկել, ուրեմն նստիր տանը ու ամբողջ օրը կեր» (Աղավնի)։ Վերջին օրինակներում գլխավոր նախադասության մեջ հանդես է եկել ուրեմն եզրափակող բառը, որով մի կողմից ավելի սերտ է դառնում գլխավոր և երկրորդական նախադասության կապը, մյուս կողմից ընդգծվում է նրանց միջև եղած հիմունքի իմաստային երանգը (այստեղ հիմունքի իմաստային երանգը այնքան ուժեղ է, որ դժվար է որոշել, թե այս երկրորդական նախադասությունները պայմանի են թե՞ հիմունքի)։

Պայմանի անշաղկապ նախադասություն պետք է համարել նաև այն բարդ նախադասությունները, որոնցով արտահայտվում է կասկած որևէ գործողության իրագործելիության վերաբերյալ, նրա համար անհրաժեշտ պայմանի անհավանական լինելու հետևանքով։ Այս նախադասությունները ունենում են հետևյալ կառուցվածքը—գլխավոր նախադասության ստորոգյալը դրվում է հրամայական եղանակով, իսկ երկրորդական նախադասության ստորոգյալը լինում է բաղադրյալ, ըստ որում հաճախ ստորոգելիական վերադիրը լինում է նույն բայի ենթակայական դերբայը։

Օրինակներ.

«Փրկող ես՝ դու նրան փրկիր» (Սահինյան)։

«Սղնիկ կա էնտեղ, այծյամ ու պախրա, կարող ես—գնա էնտեղ որս արա» (Թումանյան)։

«Տղամարդ ես, էգուց գնա, բոյդ տեսնենք» (Իսահակյան)։

«Ձեռդ եղուտ է՝ գլխիդ խսե» («Հայկական առածանի»)։

«Վավ՝ն է, դու վերցրու»։

Պայմանի երկրորդական նախադասությունը այս դեպքում հաճախ ունենում է հարցական ինտոնացիա։